

ԱՐԱՐԱԿԱՆ ՓԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅՆԵՐՆԵՐԻՄ

Մեծանուն պրոֆեսոր Հր. Աճառյանը «Արմատական բառարանում» նշում է արարական 702 փոխառություն՝ իր և այլ լեզվարանների կողմից ստուգարանված: Գերմանացի նշանավոր հայագետ Յ. Կարստի «Wörterbuch des Mittelarmerischen» («Միջին հայերենի բառարան») բարձրարժեք աշխատության մեջ, որը գրվել է ավելի ուշ, քան Հր. Աճառյանի «Արմատականը», մատենագրական նորանոր տվյալների հիման վրա արարական փոխառությունների թիվը հասնում է շուրջ 1100 բառի:

Այս մեծաքանակ բառապաշարի գրեթե կեսը գրական փոխառություններ են:

Արարները միջնադարում հռչակված էին մի շարք գիտությունների ասպարեզում՝ մաթեմատիկա, աստղաբաշխություն, քիմիա, բժշկություն: Եվրոպայի և Արևելքի առաջավոր ժողովուրդները ծանոթանում, ուսումնասիրում ու լրացմանում էին արար գիտնականների գործերը: Հայերը, հատկապես XII դարից սկսած, բազմաթիվ թարգմանություններ են արել արարերենից, որոնք վերաբերում են երկրագործությանը, աստղաբաշխությանը, քիմիային, անասնապահությանը: Միջնադարյան Հայաստանում սիրված և առաջադիմած բնագավառ էր բժշկությունը, ուստի պատահական չէ հայերի հատուկ հետաքրքրությունը դեպի արար բժշկագիտությունը: Արաբերենից թարգմանված երկերում, երբեմն էլ ինքնուրույն ուսումնասիրություններում երևան էին գալիս արարերեն տեղանուններ՝ աստղագիտական, քիմիաբանական տերմիններ, բուսանուններ, շենքանուններ, ախտանուններ: Այդպիսի փոխառություններից հատուկ կենտրոններ արժանանում էին ընդհանուր տարածման, մի շարք տերմիններ մասնագետների նեղ շրջանում, հիմնականում բժիշկների՝ գործածական էին դառնում. իսկ գերադանդորեն գրական փոխառությունները մնում էին զրքերում՝ իրենց մեղած պատմություն:

Այսպես՝ միջին հայերենում վկայված է ավելի քան 320 արարերեն բուսանուն, որոնք գրականության մեջ հանդիպում են եղակիորեն և գրեթե նստվածք չեն տվել: Օրինակ՝ ալալուսան < aalusan (հայերեն՝ «վաղամեղուկ»), ախհաւան < aqhavan (հլ. «երիցուկ»), լապսան < labsan (հլ. «մանանխ»), լուֆ < lūf (հլ. «նվիկ»), հոբի < hūrf (հլ. «կոտեմ»), հումայդ < humais (հլ. «թրթնջուկ»), այրաս < ayras (հլ. «կապույտ շուշան»), ուսպա < ratba (հլ. «առվույտ»), պաուեխ < batfix (հլ. «սեխ»), պարկուկ < barquq (հլ. «ծիրան») և այլն:

Արաբերենից մի քանի բուսանուն հայերենում տարածվել են. ունեն իրենց հաստատուն տեղը: Դրանց մեջ անշուշտ կան բացավոր կերպով անցած լուսեր: Արդի գրականում ունենք՝ հինա < hūna, նարինջ < narinj, շա-

1 Չեռագիր վիճակում պահվում է Մ. Մաշտոցի անվան պետական մատենադարանում:

մամ<sanām, պատիճճան (պատնշան)<bādinjan, բալլա<baqila, ռանան (ռեհան)<raihān, հաշիշ<hašiš, բալասան<balasān: Բարրառներում նշված բառերից բացի, հանդիպում են՝ ասմին (լասմին)<vasamin: Նատախի բարրառում պահպանվել է ոչ միայն ծաղկի իմաստով, օրինակ՝ «Պաղվէր էր թուխ ասմին», այլև հատուկ անվան նշանակություն է ստացել (Ասմին, սեռ. Ասմինկէ): Խոխ<արբ. xaux սալոր, դեղձ», Վանի, Մոկաց, Նատախի բարրառներում գործածվում է «դեղձ» իմաստով:

118 բառ վերաբերում է բժշկագիտությանը: Օրինակ՝ ահշահ<ahsa (հալերեն՝ «աղիք»), ակրաբադին<aqrahadin (եղեղադիրք), աքիլ<aqila (սփռախտ), բուրհան (պուրհան)<buhran) (հիվանդության ճգնաժամը), բաշանուն<tasannu) (քղաձողություն), ճառահ<jarrāh (սփրաբույժ), ճազլա<nazla (հարբուխ), պարաս<baraş (քոս):

Բժշկագիտական որոշ բառեր հասել են մինչև մեր օրերը. հապ (հար)<արբ. habb, ճոպա<noḥa հիվանդության դարձը: Բարրառներում՝ վարամ (վէրէմ) հելուժախտ<արբ. verem (vārām): Վանի բարրառում վարամ (թալուկ) ստացել է հալհոլական իմաստ, բայց բառացի նշանակում է՝ հելուժախտափոր: Պոտալքի խոսվածքում վարամ գործածվում է նաև «թուլն» նշանակությամբ (պրոֆ. Վ. Առաքելյանի բանավոր վկայությամբ), օրինակ՝ օցի վարամ, վարամօտ: Վարամ բառը անշուշտ ժողովրդական փոխառություն է, քանի որ բարրառներում չատ է տարածված:

Ասաղագիտական տերմիններ՝ ամպար «մոլորակ» Զ. Կարստր ստուգարանում է արբ. amber բառից (WM), այուխ «լուսաստղ»<ayyūq, ասուպ «թռչող աստղ»<արբ. ashub (Կարստ, WM), զանապ «գիսաստղ»<zanab, զոհալ «երեւակ»<zuhāl, զոհրա «արուսյակ»<zuhra, թուրայա (մոլորակ է)<thurayya, մառնի «հրատ»<mirr-x, տապրան (աստղ է)<dabaran, օտարիտ «փալլածու»<utarid և այլն:

Այս բոլորից միօրին հայերենում հաճախ գործածվում են օօհալ, զոհրա բառերը (Հ. Երզնկացի, Կ. Երզնկացի, Գրիկ) իսկ արդի հայերենում տարածվել է ասուպ բառը:

Այլ կարգի մի քանի գրական փոխառություններ՝ ազաա «հասարակածի հաստված»<agd «կապ, պսակ, մանլախ», ադադ «քանոն»<idāda, կոքր «տրամագիծ» — այս բառը պրոֆ. Աճառյանը կապում է թրք. götürü բառի հետ (Արմ. բառ.), իսկ Կարստը ստուգարանում է արբ. qutr բառից (WM), որը ավելի հավանական է. Էլում «գիտնական, գիտուն»<ulum, խիկար «իմաստուն»<hiqar, յաշիպ «լուսաբան»<assab, ալքիմիա<alkimya, կալի<qalia, բախրբդ «գրված կամ գրելի թուղթ»<taxtit, պրտու «ջնջագիր»<bardi, մակալաք «ստեղծագործության մաս, զլուխ, բաժին»<maqalāt «հոդված», կաֆա (կափա) «հանգավոր բանաստեղծություն»<qafiya և այլն:

Սրանցից այսօրվա գրականում պահպանվել են՝ խիկար, ալքիմիա, կալի, կաֆա:

Սիջին հայերենը մեզ ավանդել է շուրջ հինգ հարյուր ժողովրդական փոխառություն, որոնք ժամանակին եղել են ավելի գործածական, բան գրական փոխառությունները, հանդես են եկել բառակազմական ձևերով, և դրանց մի մասը բարրառներում այսօր էլ կենսունակ է:

Իթև գրական փոխառությունների համար ժողովուրդների կուլտուրական փոփոխությունը արդեն բավարար հիմք է, իսկ նրանց համակեցությունը լոկ սժանդակ

նշանակություն ունի, ապա բանավոր փոխառությունների անհրաժեշտ պայմանը հենց ժողովուրդների համակեցությունն է, նրանց սերտ, առօրյա հարաբերությունը: Թե՛ գրական, թե՛ ժողովրդական փոխառությունների հարցում կարևորությունից զուրկ չէ նաև գերիշխանության հանգամանքը, բայց սա ևս ավելի էական է ժողովրդական փոխառությունների կապակցությամբ: Սովորաբար հպատակ ժողովուրդը հարմարվում է տիրողին, ենթարկվում նրա լեզվական ճնշմանը:

Ժողովրդական փոխառությունների հանգամանքները պարզելու համար պիտի հաշվի առնել պատմական որոշ իրողություններ:

Մինչև արաբների կողմից Հայաստանը նվաճելը հայ ժողովուրդն արաբների հետ առնչվում էր երկրից հարավ ընկած սահմանային շրջաններում, ուր բնակություն էին հաստատել բաղամթիվ արաբ ցեղեր: Իսկ երբ Հայաստանը նվաճվեց արաբներից, խալիֆայության համար առաջնակարգ խնդիր դարձավ երկիրը արաբ ռալմունակ ցեղերով բնակեցնելը: Հատկապես 774—775 թվականների հայկական ապստամբություններից հետո արաբներն սկսեցին զանգվածորեն գաղթել Հայաստան. շայբանիների ցեղը տիրեց Դատվանին, սուլայմ ցեղը՝ գրավեց Բաղեշից մինչև Կարին ընկած շրջանները, կալսիկները հաստատվեցին Վանա լճի շրջակա գավառներում, ութմանիկները՝ Առբերանում և այլն:

Արաբ պատմիչ Յակուբիի վկայությամբ՝ 786—809 թվականների ընթացքում, երկիրը «զսպելու» նպատակով, այնքան արաբ ցեղեր բերվեցին «Արմինիա», «որ ոչ ոք չէր հանդգնի շարժվել»²:

851 թվականին Հայաստան արշավեց Բուղան՝ իր հետ բերելով արաբ նոր գաղթականություն: Այս առթիվ Թուֆա Արծրունին գրում է՝ «...սկսան աչնուհետև աներկիւղ համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն ազգքն տաճկաց որ ելեալ էին զհետ նորա ընտանեօք իւրեանց և ձեռնամուխ եղեն բաժանել զերկիրն յինքեանս. և արկանէին վիճակս և լարս ձգէին ի վերայ սահմանաց և բնակէին յամուրս աշխարհիս աներկիւղս»:

Արաբ գաղթականությունը Հայաստանում գրավելով հողային ընդարձակ տարածություններ՝ հիմնեց մի շարք ամիրայություններ, որոնք խալիֆայության թուլացումից հետո էլ բավականին ժամանակ պահպանում էին իրենց գոյությունը:

Հայերենի բառապաշարի բնութսյան համար կարևոր հանգամանք է, որ հայ ժողովուրդը բուն իւր երկրում արաբական տիրապետության շրջանում, ինչպես և դրանից հետո որոշ ժամանակ, ապրել է արաբ ցեղերի հարևանությամբ: Դա չէր կարող անհետևանք լինել: Կարծում ենք, որ ժողովրդական խոսակցական հայերենը, հատկապես VIII դարի վերջերից, երբ արաբ ցեղերի բնակեցումը Հայաստանում մեծ չափերի էր հասել, թերևս մինչև IX դարի վերջերը կամ X դարը՝ արաբերենից անմիջաբար փոխառություններ էր կատարում: Դրա հետքերը որոշակիորեն պահպանված են մեր մի շարք բարբառներում:

Քննենք մի քանի օրինակ՝

Ընդակ «ապրանք, ինչք» < արբ. rızq (հոգն. arzāq): Հանդիպում է Խնուսի, Մշո, Վանի, Ակնա և այլ բարբառներում: Բազմիցս վկայված է նաև

2 Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 62:

3 Թուֆա Արծրունի, 1852 թ., Կ. Պոլիս, էջ 170:

միջին հայերենում (Անսիղք, էջ. 85, Ջաք. Սաշկ. ր. էջ 30, Ֆրիկ. Բանաստ. էջ 125 և այլն):

Մազրա (մզրա, մրզրա) «արտորայք, շրջակա մշակելի հողեր» <արբ. mazraʿa: Պահպանված է Շատախի, Մոկաց, Ողմի բարբառներում: Շատախի բարբառում կա այսպիսի արտահայտություն՝ «Մրզրէք'օլ Կ'եղ», սա նշանակում է այնպիսի գյուղ, որի տները ցրված են միմյանցից հեռու շրջապատված իրենց արտերով: Շատախում կան մի շարք գյուղանուններ մզրա բառով, այսպես՝ Պապոնց մզրա, Բաղջկանց մզրա, Եինա մզրա, Կոսենց մզրա: Միջին հայերենում այս բառը վկայված է 1243 թ. 1291 թ. սրձանագրություններում և Ջղեղն Մեծոփի իւր մզրայիւքն» (տե՛ս Վիմ. տար., էջ 133):

Ոհմ Վախա <արբ. wahm Վախա: Բայացած՝ ոհմիլ, ոհմուլ, սաստիկ վախենալ, սոսկալ» պահպանվել է Ախյցիսայի և մի երկու այլ բարբառներում:

Ոխվ, ոխփ, վախմ, շարքապատկան, վանքին կոտկված մի բան» <vaqf: Միջին հայերենում վկայված է՝ Յիշ. 1298 թ., 1445 թ. և այլն: Պահպանված է Շատախի, Մոկաց բարբառներում՝ լոխվի ձևով, որտեղ բառավերջի ի-ն անօրինակացնող անանց է. բառի իմաստն է՝ «անձնամիտելի, սրբապատկան»:

Փղուլ, ժիուլ, մշղուլ «զբոսանք», «զվարճանք», «զրադմունք» <արբ. suri, masʿūl: Միջին հայերենում վկայված է Գր. Տաթ. էջ 36 (ժիուլ ձևով), Մխ. Հեր. 224 (ժղլիլ՝ իրրե բայ), Վաստակոց գրքում, էջ 32՝ մշղլիլ և այլն: Այա-կերտի, Մշո. Խնուսի, Նոր Բայազետի, Վանի բարբառներում ժղլել նշանակում է «զրադվել, խոսելով ժամանակ անցկացնել»:

Խնուսի բարբառում ժիուլ նշանակում է «զրույց»:

Մշո բարբառում ժիլաուն՝ «այնտեղ, ուր հավաքվում են խոսելով ժամանակ անցկացնելու»:

Շատախի բարբառում ունենք մծուլ անել <masqul ձևից), որ նշանակում է «զրադվել, ժամանակ վատնել»:

Խալաւս «մաքուր, ազատ, զերծ» <արբ. xalāš, xalis: Միջին հայերենում վկայված է Կ. Երզնկացու, Հ. Երզնկացու բանաստեղծություններում: Վանի բարբառն ունի խալիս, որ նշանակում է «մաքուր», օր. «խալիս արծաթ»:

Նույն բառը բայացած հանդիպում է Ֆրիկի մոտ՝ «փրկել» իմաստով. «Մի՞թե կարեք դիդ խալրսն և ի տանջանացն դիս ազատել», Հովհ. Երզնկացին ունի՝ «ազատվել» իմաստով, «Գոհ եմ աստծու բարոյն, որ ի քո տեղով խլրսայ»:

Սասունի, Շատախի, Վանի, Նոր Նախիջևանի և այլ բարբառներում «խրլրսել» բայը շատ դործածական է «ազատվել, պրծնել, վերջանալ» իմաստներով: Օր. Շատախի բարբառում՝ Հրմեկ խլրսալ՝ «բոլորը վերջացավ»:

Հասրալ «կարոտ» <արբ. hasrat: Վկայված է Կ. Երզնկացու, Ֆրիկի, Հ. Երզնկացու երկերում: Շատախի բարբառում պահպանվել է խասրալ ձևով, «ժանդոտ մախաթ, վա՛վ ք'ի խասրաթ»:

Բառասկզբի հ>խ համապատասխանությունը ցույց է տալիս, որ փոխառությունը Շատախում բավականին հին է, որովհետև թուրքական շրջանում արդեն հ>խ օրենքը չէր գործում: Օրինակ՝ թրք. havar > արբ. հալար («Հավար տարէք՝ տէք'էր կրնգ ան»):

Հուրի «գեղուհի», «կին» <արբ. hūrya: Շատախի բարբառում պահպանվել է ալըխուրի բարբառի մեջ, որ կազմված է տեղի հուրի բառերի և նշանակում է «տերտերակին»:

Այս բառում ևս ունենք հ>խ համապատասխանություն: Այլ շրջանում բարբառը նույն բառը երկրորդ անգամ փոխառել է թուրքերենի միջոցով, որտեղ հ-ն մնացել է անփոփոխ՝ հուրի վառի:

Թարկել, բորկ (տալ), բորկել < արբ. tark բառից: Պահպանվել է Ալաշ-կերտի, Մոկաց, Մշո, Սասունի, Ակնա, Խոտորչուրի և այլ բարբառներում:

Միրաս, միրաթ, մերաս *սեփականություն* < արբ. mīrās: Գործածել է Ֆրիկը՝ միրաթ ձևով: «Ոչ ի հօրէ առեալ միրաթ, ոչ աստուծոյ տուած նորայ» (Իւնաստ., էջ 126): Հանդիպում է Վանի (միրաս), Պոլսի (մերաս) բարբառներում: Բառակերպի թ ու տարրերությունը պայմանավորված է արբ. մ հնչյունի լուրահատուկ արտասանությամբ: Հենց արաբերենում, նախած խոսվածքին, մ-ն կարող է կամ բ, կամ ս արտասանվել:

Ռուպ, քուուպ, ոուր *շողջաք* < արբ. rubb: Պահպանվել է Վանի, Մոկաց, Շատախի բարբառներում:

Պրոֆեսոր Հր. Աճառյանը արաբական շրջանի մասին գրում է. «Չունենալով որևէ գրվածք այս շրջանի ժողովրդական լեզվով, մենք իսկապես չգիտենք, թե հասարակ ժողովրդի լեզուն որչափով ազդվել էր արաբերենից»⁴:

Մենք փորձեցինք ցույց տալ, որ արաբերենի հետքերը մայրենի բարբառների մեջ հասել են մինչև մեր օրերը: Եթե ազդեցությունն այսքան կարող է հարատևել՝ ինչո՞ւ չհավատալ, որ XII դարում՝ միջին գրական լեզվի մշակման շրջանում, այն ավելի խոր արմատներ է ունեցել խոսակցական հայերենում: Երբ միջին հայերենը գրական լեզվի ճանաչում ստացավ, ինչպես Կիլիկիայի, Միջագետքի ու Սիրիայի, այնպես էլ բուն Հայաստանի հեղինակների երկերում երևացին ժողովրդական բնույթի արաբական փոխառություններ: Միջագետքում ու Սիրիայում՝ սկսած VII դարից մինչև հիմա հայերն ապրում են արաբների հետ կողք-կողքի: Կիլիկիան սահմանային հարևանություն ունի Գամասկոսի ու Հալերի արաբ սուլթանությունների հետ, իսկ 1375 թվականից ընկավ Եգիպտոսի արաբների լծի տակ: Զարմանալի չէ, որ այս կողմերի հայ հեղինակների երկերում կան բանավոր ճանապարհով անցած արաբական փոխառություններ: Օրինակ՝ Վարզան Այգեկցուն⁵ առականում:

«Մեք հիլալով ենք զխօսքն ի նոցանէ ուսէր և զխաբելն»⁶:

«Եղբարքն հիլալեցին զնա, և ոչ թէ գալքն կերան»⁷:

< արբ. hiḷāl *սեննգություն*: Հյ. հիլալով՝ *սեննգությամբ*, հիլալել՝ *սեննգել*, վնասել, ամբաստանել:

«Ամ տուր մեղ քանի մի բարով խալիլի»⁸: < արբ. xabar *լուր*, տեղեկություն:

«Ասացեր են իմաստունքն, թե Գ. իւր հայք է. ի կուրին եղև ճրագն հաֆ է. իսլօք մարդն մօտ յանգէտն հայք է. թէ զճրագն ի յարեգակն վառեն, հաֆ է»⁹: Հայք, հաֆ < արբ. haif *ափսոս*:

«Մեր հաքիմներն ասացեր են»¹⁰: < արբ. hakīm *քրժիչ*:

«Ով զահմալ չէ քաշէ, նա շահ չի գտնուր»¹¹: < արբ. zahmat *եղծվարություն*, անհարմարություն, նեղություն:

⁴ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2-րդ, էջ 173:

⁵ Մեղել է Տլուր (Դուրխե) գավառում, ապրել ու ստեղծագործել է Սև լեռների Այգեկ վանքում (XIII դ.):

⁶ XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, էջ 350:

⁷ Անդ, էջ 349:

⁸ Անդ:

⁹ Անդ:

¹⁰ Անդ, էջ 347:

¹¹ Անդ:

«Այր ոմն վաճառական հալալ կին ունէր և հարամ կին»¹²; Հարբ. ḥalāl «մաքուր, ազնիվ, անարատ»։ Հարբ. ḥaram «անազնիվ, անմաքուր, պիղծ»։

«Եւ փուշն ի փողն փակաւ և ի մեռանելոյ ճորով ազատեցաւ»¹³; Հարբ. javr «բռնութիւն, ուժ»։ Հ. ճորով (ջորով)՝ «ուժով, բռնութեամբ, հաղիվ, մի կերպ»։

«Խիստ բարձր ձայնիւ ճնշեաց մառաք կանչելով»¹⁴; Հարբ. madad «օգնութիւն, ա՛խ»։

«Թաւաղիք և հնար դտաւ և ասաց»¹⁵; Հարբ. tedbīr «միջոց»։

«Եհան ի վիմի տակէն շատ մալ և տարաւ ի տուն իւր»¹⁶; Հmal «եղ»։ Բերված նախադասութեան մեջ գործածված է հարստութիւն, գանձ» իմաստով։

«Ես ի սկզբանէ մսագործ էի. և արդ ո՞ւր արար զիս սլալար»¹⁷; Հարբ. baytar «պալտար»։

«Եւ ունէր շատ ոսկի և արծաթ և շատ գեղորեալք և ազարակ և շատ մլքեր»¹⁸; Հարբ. mulk «հարստութիւն»։

Այս բնութի փոխառութիւններ շատ կան բուն Հայաստանի միջին հայերենագիր հեղինակների՝ Ֆրիկի, Կ. Երզնկացու, Հ. Երզնկացու, Խ. Կեչառեցու երկերում, XII, XIII, XIV դարերի Բջնիի, Անիի, Շիրակի արձանագրութիւններում, գանազան հուշերում և այլն։

Ահա մի քանի օրինակ Կ. Երզնկացուց.

«Քո սէրդ իմ սրտիս զերդ հուր,

Քո տեսդ աչերուս իմ նուր»¹⁹։

Հարբ. nur «լույս»։

«Քո սիրտդ ի յաշխարհիս

ի հասրաքեց է հուր վառել»²⁰։

«Այսօր եմ հուքմով իշխան»²¹; Հարբ. hukm «հրաման»։

«Ես եմ առանց սուլեհ

ու մերկ եմ լանդիման կանգնել»²²; Հարբ. silah «զենք»։

«Դու յաճապ քաղցր ու լատիֆ ես խօսելով»։ Հարբ. ʿaḡīb «զարմանալի»։ Հարբ. latif «նուրբ»։

«Զերդ ըզլուսին սուրաք բոլոր

Շուրջ երեսին մաղերն ոլոր»²³; Հարբ. surat «կերպարանք, ձև երես»։

«Մարուպ բլբուլնի շատ կան,

12 Անդ, էջ 344։

13 Անդ, էջ 335։

14 Անդ։

15 Անդ, էջ 348։

16 Անդ, էջ 333։

17 Անդ, էջ 324։

18 Անդ, էջ 335։

19 Կ ո ս տ ա ն դ ի ն Ե Ր Զ Ն Կ ա ջ ի, 1962, էջ 158։

20 Անդ, էջ 177։

21 Անդ, էջ 154։

22 Անդ, էջ 183։

23 Անդ, էջ 163։

Խոսին ի սիրու շատ բան²⁴: <արբ. *mutrib* «երդիչ»:
 Ենս վանց քո սիրոյդ համար
 Խե եմ և եղեալ խումառ,
 Զերա քո տեսդ է դամար²⁵: <արբ. *xumar* «խենթ, դիժ, գինով»:
 <արբ. *qamar* «լուսին»:
 Ե՛ր սիրոյդ հիւանդ եմ ես,
 Հեքիմ և ճարակ դու ես²⁶:
 Ելուսինս սուրաթով լուս ես,
 Պատրես ու թամամ ելենս²⁷: <արբ. *badr* «լիալուսին», հյ. պատրել՝
 «բուրբել»:
 Ելեղուովն քաղցր շաքար
 ու սըրտովն է գերդ ըղջալստ²⁸: <արբ. *jallad* «դահիճ»:
 Եմր չըլինիս հաքր աստենիս,
 որ չարնէ դորն ըղքեղ մազատ²⁹: <արբ. *haqir* «անարգ»:
 mazad «աճուրդ»:
 Ե՛րալց դահր ի քեզ չէ՛ հարիֆ
 Ե՛ր Կոստանդին, ունկալ ի դատ³⁰: <արբ. *qahr* «բռնութիւն»:
 harif «ընկեր»:
 Ե՛հալս բանքս ի Կոստանդեալ
 դապուլ արա, որ քեզ տըւի³⁰: <արբ. *qabul* «ընդունում, համաձայն-
 նութիւն», հյ. դապուլ աճել, դապուլ ալճել (առնել)՝ «ընդունել, համա-
 ձայնակել»:
 Ե՛րարձիր ու լետ նայէ
 ու գիտ խելօք քատալիր ու ճար,
 Որ չմնաս ի մէջ ծովուն³¹.

Հովհ. Երզնկացոյց.

Ե՛միրես մանկութեան անունն ու նըսեֆ մանկան չունենաս³²: <արբ.
näsif «վստահութիւն, հավատ»:
 Ե՛ժընել ես՝ և լաշխարհս եկել, տուր իտալար, թե ուստի՞ կու գաս³³:
 Ե՛թիալ մ՝ աւելի չարար, առ կըշոնց դամէնըն չափով³⁴: <արբ.
mıdqāl (փոքր չափ է):
 Ե՛միլ որ օտարին վատ ասէ, նա ինքն
 դարիպ լինենա,

²⁴ Անդ, էջ 157.

²⁵ Անդ, էջ 159.

²⁶ Անդ, էջ 160.

²⁷ Անդ.

²⁸ Անդ, էջ 185.

²⁹ Անդ, էջ 186.

³⁰ Անդ, էջ 198.

³¹ Անդ, էջ 203.

³² Հովհ. Երզնկացոյց, 1958, էջ 144.

³³ Անդ, էջ 144.

³⁴ Անդ, էջ 149.

Երթայ ի յօտար երկիր, զղարիպին դատրըն գիտենայ»³⁵ <արբ. Կա՛րիբ
սօտարական>: <արբ. զձու՛ր տու՛թ, մեծություն>:

«Բանիկ մի դալաթ արի, որ զօձու ձագըն սիրեցի»³⁶ <արբ. Կալաթ
սսխալ, հանցանք, մեղք>:

«Հովհաննէսին մայրն է, տըղա չի,

հագեր վալալ վըրան ճուպայ»³⁷ <արբ. jubba «կարճ վերարկու»:

«Հալ իմ մարիկ, ես քեզ ծառայ,

Զկաթդ որ կերայ, հալալ արայ»³⁸:

«Այսօր ծեծեց իմ հայր դատին,

Թ' է՛ր կու սիրես հայուն որդին» <արբ. զձ՛ւր «դատավոր»:

«Զերթ դոսկի է խալաս, որ այլ չերեի»³⁹ <արբ. xalas «մաքուր»:
<արբ. «aib «արատ, թերություն, սխալ, պակասություն»:

Ֆրիկից՝

«Եւ զինչ այիւլ առ հա լինի, ամենեին այն չերեի»⁴⁰ <արբ. «aib»:

«Ոչ դալը և ոչ երդում ունիս»⁴¹: <արբ. qav! «պայման»:

«Զամէնն է հաշուով զուգեր անդալատ

Աստուած դատաւոր»⁴² <արբ. Կալաթ «մեղք, սխալ, հանցանք». հլ. ան-
դալատ «անմեղ, հանցադերժ, անսխալական, արատ չունեցող»:

«Ժողովեցի շատ մի բարի,

Ընդակ արի դնա թաթարի»⁴³ <արբ. rızq (հոգն. arzād) «ունեցվածք,
ապրանք, ավար»:

«Ինաց մանկութեան հասարաքն

ու երեկ ինձ հոգ անի հուն»⁴⁴:

«Անապ ամ լէ՛ր կու դատիս,

Աշխարհիս երակ դու Ֆրիկ»⁴⁵ <արբ. «aġab «արդյոք»:

«Լիմ երբ հանց ընկեր քո բախտն ու քալեհն»⁴⁶ <արբ. Լալվ- «երջան-
կության աստղ»:

«Թէ լինէր ինձ դօլուաթ և խելք ի բարին» <արբ. dawlat «բարիք,
հարստություն, ունեցվածք»:

«Ոչ մուլքն, ոչ ապրանքն օգտէ»⁴⁷:

«Մալաք, թե քեզ քուֆր ասեմ,

35 Անդ. էջ 154:

36 Անդ. էջ 155:

37 Անդ. էջ 165:

38 Անդ. էջ 166:

39 Անդ. էջ 185:

40 Ֆրիկ, Բանաստեղծություններ, 1941, էջ 238:

41 Անդ. էջ 218:

42 Անդ. էջ 223:

43 Անդ. էջ 25:

44 Անդ. էջ 40:

45 Անդ. էջ 113:

46 Անդ. էջ 113:

47 Անդ. էջ 219:

և այլ ասեն, թե մարդըն մոլոր»⁴⁸, <արբ. falak «ճակատագիր», <արբ. kufir «հայհոյանք»:

«Մէկին հարամըն յաշողի,

Մէկին հալալըն կորուսի»⁴⁹,

«է՛ր ևս հագել դու նասի՛ն

ու նստել զինչ մէկ ի նուին»⁵⁰ <արբ. nasi՛ «հյուսկեն»:

«Թէ խելք ու բասար ունիս»⁵¹ <արբ. başar «տեսողություն», «բանականություն»:

Ընդգծված փոխառությունները առօրյա գործածության բառեր են: Գրքերից վերցվելու պեպքում չէին կարող մեծ տարածում գտնել, այլ ժողովուրդների երկարատև շփման պայմաններում բանավոր ձևով լեզվից լեզու անցնելով միայն կարող էին մրցման մեջ մտնել հարազատ լեզվի շատ ու շատ բառերի հետ:

Կա մի հանգամանք, որը մտածել է տալիս, թե միջին հայերենի արաբական փոխառությունները բուն Հայաստանում անմիջաբար արաբերենից չեն, այլ անցել են թերևս հարևան պարսկերենի միջոցով: Պրոֆ. Աճառյանն այդպես էլ կարծում է⁵²: Ո՞րն է այդ հանգամանքը. արաբական տիրապետությունը Հայաստանում վերանում է IX դարի վերջերին, և այդ տիրապետության ամբողջ ընթացքում հայ մատենագիրների երկերում արաբերեն բառեր կամ չկան, կամ հանդիպում են հատ ու կենտ. արաբական փոխառությունները երևան են գալիս ավելի ուշ՝ այն ժամանակ, երբ Հայաստանում արաբական ազդեցություն չկար (հիմնականում XII դարից):

Նախ. ինչո՞ւ արաբների տիրապետության շրջանի հայ մատենագրության մեջ արաբական փոխառություններ քիչ կան: Որովհետև ժամանակի միակ գրական լեզուն՝ գրաբարը, կտրվելով ժողովրդական լեզվի ակունքներից՝ մնացել էր հին օրինաչափությունների շրջանակներում: Գրաբարագիր հեղինակները սրբությամբ պահելով լեզվի հին օրենքները, պահպանում էին նաև հնուց ավանդված մայրենի բառապաշարը: Ուրեմն բնական պետք է դիտել, որ այս շրջանի գրական երկերում արաբերեն փոխառությունները հազվագյուտ են:

Մյուս կողմից՝ չենք կասկածում, որ հայերենին արաբերեն բառեր անցել են նաև պարսկերենի միջոցով, բայց մի՞թե մինչև XII դարը պարսիկները մեզ հարևան չէին. չէ՞ որ արդեն VII դարից նրանք ենթարկված էին արաբական ազդեցության: Ինչո՞ւ VII—XII դարերում պարսկերենի միջոցով արաբական փոխառությունները չէին անցնում մեր լեզվին: Ուրեմն այստեղ ուրիշ պատճառ կա՝ հին և միակ գրական լեզուն՝ որը խուսափում էր նոր ու անհարկի փոխառություններից:

Չպետք է անտեսել մի կարևոր հանգամանք ևս: Բուն Հայաստանի հեղինակների երկերում հանդիպում են այնպիսի արաբական փոխառություններ, որոնք հնչյունական արտահայտությամբ ուղղակի համընկնում են արաբական բառաձևերին, իսկ դրանց կողքին հաճախ առկա են պարսկական հին կամ նոր տարբերակներ: Բերենք մի քանի օրինակ.

48 Անդ, էջ 217:

49 Անդ, էջ 236:

50 Անդ, էջ 128:

51 Անդ, էջ 86:

52 Տե՛ս «Հայոց լեզվի պատմություն», հ. 2-րդ, էջ 183, 185:

Հովհ. Երզնկացին ունի՝

«Խոզրն ջոհար և՛ բր ճանչէ, զօրն ի բուն զաղրրն կու փորէ»⁵³: <արբ. Jauhhar: Վկայված է նաև Սա. Օրբել. կողմից՝ ջաւհար ձևով (էջ 185, 298): Այս բառը արարները փոխ են առել պարսկերենից (<պրս. gōhar), բառասկզբի Ծ-ն տառադարձելով յ-ի: Միջին հայերենի ջոհար ձևը համապատասխանում է արաբականին: Սրա կողքին գեո զասական շրջանից ունենք զոհար, որ իրանական է:

Կ. Երզնկացին ունի՝

«Ով կնոջ սուրբ և բարոյ ինք հանդիպի,

Նա իր քան է պարծանաց թագաւորի»⁵⁴: <արբ. ta] «թագ» <պրս. tag: Դասական շրջանից ունենք նաև պարսկականին համապատասխանող քազ, որ բերված նախադասության մեջ առկա է թագաւոր բառում:

Մխ. Հերացի՝ «Ապա պատեն է տալ մուղ նոան ջուր... կամ ճուլլալ հով ջրով»⁵⁵: <արբ. ĵullāb «մեղմացուցիչ ըմպելի»: Արարները այս բառը ևս փոխ են առել պարսկերենից (<gulāb): Հայերեն ձևը դարձյալ համընկնում է արաբականին:

Ֆ ր ի կ

«Թէ բուրջն ու թալենն աղէկ՝

Յաստուծոյ է քեզ հրամայած.

Ջինչ լաշխարհըս մարդ որ կայ՝

Ջերդ մըշակ են քեզ կանգնած»⁵⁶: Վկայված է նաև 1160 թ. մի արձանագր. մեջ (Վիմ. տար., էջ 31), Վաստակոց զրքում, էջ 33՝ պրքեր հոգն ձևով և այլն: Հյուրձմանն այս բառաձևը կապում է արբ. bur] բառի հետ, որը ևս պարսկական ծագում ունի <պրս. durğ «աշտարակ»: Պրիկի բանաստեղծության մեջ հավանաբար դործածված է «բարձրութուն» կամ «աստիճան» իմաստով: Դասական հայերենում նույն բառը ունենք բուրզն ձևով:

Տեհուն. Դահուն. Տահուն բառը, որը նշանակում է «կաքավ», վկայված է Մխ. Հերացու, Հ. Երզնկացու, Դր. Մազիստրոսի երկերում: Ծագում է արբ. tāihū] բառից: Պարսկերենն ունի tihū:

Լազուարդ, լաժուարդ, լաջվարդ, վկայված է Դր. Տաթևացու, Մխ. Հերացու և այլոց կողմից: Ծագումով պարսկական է՝ lažvard: Հնդկերենում. դարձել է lajvard, որն անցել է արաբերենին. այդտեղ հնդկականի կողքին կա նաև lazvard: Հայերենում հանդիպում է թե՛ լաժվարդ, թե՛ լաջվարդ, թե՛ լազվարդ: Առաջին ձևը պարսկականից է, վերջին երկուսը՝ արաբականից (տե՛ս Հր. Աճառյանի Արմատկան բառարանը, համապատասխան բառի տակ):

Ճունդիկ «դինվոր» բառը փոխառյալ է արաբական ĵundī ձևից, որը Աճառյանը կապում է պրս. ĵund, պհլ. guind բառերի հետ: Դեռ զասական շրջանից ունենք նաև զունդ, որ համապատասխանում է իրանական ձևին:

Այսպիսի օրինակները ցույց են տալիս, որ հայերենի կապը արաբերենի հետ բուն Հայաստանում ևս, ինչպես Կիլիկիայում, Սիրիայում, որոշ ժամանակ եղել է անմիջական:

⁵³ Հովհ. Երզնկացի, էջ 143:

⁵⁴ Կ. Երզնկացի, էջ 219:

⁵⁵ Մխ. Հերացի, Ջերմանայ մխիթարութիւն, Վենետիկ, 1832, էջ 7:

⁵⁶ Ֆրիկ, էջ 226:

Որտեղի՞ց և ինչպե՞ս XIII դարում ժողովրդական բնույթի արաբական փոխառությունները մտան միջին դարական լեզվի մեջ: Անշուշտ՝ ժամանակի խոսակցական հայերենից: Չպետք է մոռանալ, որ միջին դարական հայերենը մշակվել է խոսակցական լեզվի հետ սերտ կապի պայմաններում: Միջին դարական հայերենի մեջ չի կարելի շտեմել ժամանակի խոսակցական լեզվի պարզ դրոշմը: Հենց տարբեր բարբառների ազդեցությամբ էլ մեծ մասամբ պայմանավորված է միջին դարական լեզվի ոչ միատարր բնույթը: Թեպետ միջին դարական լեզվի սկզբնավորման շրջանում արաբները Հայաստանում ազդեցություն չունեին, բայց այն բառապաշարը, որ երկարատև համակեցության պայմաններում անցել էր խոսակցական հայերենին, XIII դարում դեռ պահպանվում էր, և երբ կենդանի խոսքի հիման վրա սկսեց մշակվել միջին դարական լեզուն, այնտեղ անուշադրեց մուտք գործեցին ժողովրդի մեջ պահպանված արաբերեն բառերը:

Այսպիսով՝

1. VIII դարի կեսերից հայ ժողովուրդն իր բուն երկրում ապրել է արաբների հարևանությամբ, ըստ որում երկու դար (VIII—IX դդ.) կրել է արաբական բռնատիրության ծանր լուծը. այդ պայմաններում արաբերենից շատ բառեր են անցել ժամանակի խոսակցական հայերենին:

2. Միջին դարական լեզվի մեջ եղած ժողովրդական բնույթի արաբական փոխառությունների աղբյուրը ժամանակի խոսակցական հայերենն է:

Բանավոր լեզվից անցած արաբական փոխառությունները միջին հայերենում ոչ միայն ավելի գործածական են, քան դրական փոխառությունները, այլև հանդես են գալիս վանազան բաղադրություններում. օրինակ՝ ամիրա(ա)՝ «իշխան» <amīr(a) բառից՝ ամիրայություն, ամիրապետ, ամիրապետություն. ալամ՝ «գորշակ» <‘alam — խաչալամ «խաչվառ» հուլմ «հումաման» <hukm — հուլմարար «իշխան» մելիք «իշխան» <malīk — մելքեմ (մլքեմ) «ճորտացնել» խսար (հիսար) «պաշարում» <hisār — խսարել (հիսարել, սիսարել) «պաշարել» սլահ «դենք» <silāh — սլեհտուն «գինանոց» դալատ (խալատ. խալաթ) «հանցանք» — դալատել (խալատել) «վնասել, պարսավել» խալտիլ «սխալվել», անդալատ «անմեղ, անսխալական», խալտանք «հանցանք», սխալմունք, ջադա (ճադա) «պատիժ, տուգանք» <jaza — ճզայել «պատժել» շէր «շերտաց թերգասաց» ալիպ (ալպ) «թերութուն, արատ, սխալ» — ալպով, ալպվոր «թերութուն ունեցող» խեր «բարիք» <xayr. որից՝ բարվոլ, խերով. խումար՝ «խենթ, գիժ, գինով» <xumār, որից՝ խումարություն «խենթութուն, գինովութուն», խումբիմ (խումբեմ) «հարբել» հաքր «անարգ» <haqir — հաքրել «անխատել, անարգել» մադպուն «խաբված» <maḡbūn — մադպուն լինիմ «խաբվել» արբ. ʿumūd «անվտանգ» բառից՝ Լմնուքիւն «անվտանգութուն» և այլն:

Խեղճ փոխառյալ այս առատ բառապաշարից արդի բարբառները բավական շատ բառեր են պահել, որին անշուշտ նպաստել է հարևան լեզուների (սլաւոններն, թուրքերեն)՝ արաբերենից ունեցած մեծ ազդեցությունը, բայց աշխարհաբար դրական լեզվի երկու ճյուղերն էլ մշակման ու կատարելագործման ընթացքում մերժել են ավելորդ փոխառությունները՝ կյանքի կոչելով ժողովրդի հիշողության մեջ պատմական հանգամանքների բերումով մշուշապատված մայրենի բառերը: Այսօրվա դրական հայերենում դրական և ժողովրդական բնույթի արաբական փոխառությունների ընդհանուր թիվը մոտավորապես երեք և կես տասնյակ է. ալքիմիա, աճպարար, ամիր, ատլաս (կտո-

րեղենը), ասուս, բալասան, բակլա, թաս, խիկար, խսիր, կասուս, կալսուս, կաֆա, կլայեկ, կոլոտ, կողպ(ել), հերիսա, հինա, հուրի, մելիր, մկրատ, մոնետիկ, նարինջ, նոսա, նունուֆար, շամամ, շիր, սլայտար, սլատնջան, բեհան սուլթան, սնդուկ:

М. А. МУРАДЯН

АРАБСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ В СРЕДНЕАРМЯНСКОМ ЛИТЕРАТУРНОМ ЯЗЫКЕ

Р е з ю м е

В армянской языковедческой литературе число арабских заимствований досчитывалось до 702, а по данным рукописи немецкого арменоведа Карста «Wörterbuch des Mittelarmenischen» («Словарь среднеармянского языка») в среднеармянском употреблялись около 1100 арабских слов. Почти половина этих слов вошла в наш язык путем письменности. Известно, что арабы в средневековье славились в области некоторых наук. Передовые народности Европы и Востока, в том числе армяне, познакомились, изучали, переводили труды арабских ученых. Посредством переводов множество научных терминов, наименования целебных растений с арабского перешли в нашу литературу. Их небольшое количество удостоилось распространения, а литературные заимствования в основном оставались в книгах.

В среднеармянском литературном языке большое количество составляют арабские заимствования народного характера. Они в основном относятся к обычной жизни и в среднеармянский литературный язык перешли посредством разговорного армянского языка того времени. Изучение исторических и языковых фактов помогает выяснить связанные с этим обстоятельства.

Некоторые современные диалекты сохранили немало арабских заимствований, но в нашем литературном языке их число незначительно: приблизительно три с половиной десятка.